600.0096.12.04.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ապրիլի 2019 թվականի №96Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի №386Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2008 թվականի սեպտեմբերի 17-ի №502Ա որոշմամբ անհատ ձեռնարկատեր Վանո Դավթյանին (այսուհետ՝ անհատ ձեռնարկատեր) տրամադրված ռադիոհաճախականության օգտագործման №0440 թույլտվության գործողության ժամկետը սահմանված էր մինչև 2018 թվականի սեպտեմբերի 17-ը, և անհատ ձեռնարկատերն այն երկարաձգելու հայտով չի դիմել Հանձնաժողով,

բ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ դատարան) 2014 թվականի հունիսի 2-ի №ԵԷԴ/0054/04/13 վճռով անհատ ձեռնարկատերը սնանկ է ճանաչվել,

գ) Հանձնաժողովը՝ տեղեկանալով անհատ ձեռնարկատիրոջ սնանկ ճանաչվելու փաստի վերաբերյալ, 2014 թվականի սեպտեմբերի 4-ի №ՍԱ-1950Հ, 2017 թվականի մարտի 6-ի №ՌՆ-525Հ, 2017 թվականի նոյեմբերի 13-ի №ՌՆ-2897Հ, 2018 թվականի փետրվարի 13-ի №ՌՆ-311Հ և 2018 թվականի մայիսի 8-ի №ՌՆ-957Հ գրություններով 1 545 105 (մեկ միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար հարյուր հինգ) դրամ գումարի չափով պահանջ է ներկայացրել դատարան,

դ) Հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 10-ի №386Ա որոշմամբ (այսուհետ՝ №386Ա որոշում) անհատ ձեռնարկատերը պարտավորեցվել է ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով հաշվարկված 827 635

(ութ հարյուր քսանյոթ հազար վեց հարյուր երեսունհինգ) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

ե) 2018 թվականի հոկտեմբերի 23-ին անհատ ձեռնարկատերը, իսկ հոկտեմբերի 24-ին վերջինիս սնանկության գործով կառավարիչը՝ №386Ա որոշումը վերանայելու միջնորդությամբ դիմել են Հանձնաժողով,

զ) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ անհատ ձեռնարկատիրոջ պարտավորության գումարի չափով Հանձնաժողովը №ԵԷԴ/0054/04/13 սնանկության գործի շրջանակում պահանջ է ներկայացրել դատարան, և №386Ա որոշման անհրաժեշտությունն ըստ էության բացակայում է, ուստի Հանձնաժողովը նպատակահարմար է գտնում այն վերանայել, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 57-րդ հոդվածը, «Սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Վերանայել և ուժը կորցրած ճանաչել Հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «Անհատ ձոնարկատեր Վանո Դավթյանին Հայաստանի Հանրապետության պետական բյուջե գումարի փոխանցում պարտավորեցնելու մասին» №386Ա որոշումը:
2. Ընդունել ի գիտություն, որ անհատ ձեռնարկատերն իրավասու է.
   ա) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   բ) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատիրոջը և վերջինիս սնանկության գործով կառավարչին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ **Մ. ՄՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք. Երևան
12 ապրիլի 2019թ.